ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2016- 09.02/68
09.02.2016 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գևորգ Կոստանյանին

Պատճենը՝ ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետ
Վ. Շահինյանին

Հարգելի պարոն գլխավոր դատախազ,

2016թ. հունվարի 11-ին www.1in.am[1] կայքջում հրապարակվել է «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ, Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Արամ Զավենի Սարգսյան հարցազրույցը:

Վկայակոչված հարցազրույցում Արամ Սարգսյանը լրագրողի այն հարցին, թե «մենք հստակ կարո՞ղ ենք հիմա ամրագրել, որ դուք 2017-ին մասնակցելու եք խորհրդարանական ընտրություններին և առաջնորդելու եք զոնե արևմտամետ ուժերին և գործիչներին» հարցին տալիս է հետևյալ պատասխանը.

«Երբ դուք խնդիր դրեցիք՝ ի սկզբանե հավն է եղել, թե ձուն, ես մտածեցի ու ինձ բռնացրեցի, որ Հովհաննես Ավետարանիչի կողմնակից եմ. «Ի սկզբանե էր բանը, և բանն Աստծո մոտ էր, և բանն Աստված էր»: Աստծուց առաջ չընկնենք, ես չեմ կարող խոսք տալ մեկ երկու տարվա կտրվածքով: Ոչ թե կասկածում եմ, այլ Աստված պիտի կյանք տա, Աստված պիտի այդ հնարավորությունը տա, որ ես կարողանամ այդ ամենն անել: Այդ համախմբումը եթե ինձնով լինի, ես սիրով կանեմ, ես առ այսօր պայքարել եմ ոչ թե Ռոբերտ Քոչարյանի, ոչ թե Սերժ Սարգսյանի դեմ, այլ պայքարել եմ ճշմարտության համար: **Ես ուզեցել եմ հասկանալ՝ որտեղի՞ց էր Հոկտեմբերի 27-ի արյունը՝ դրսի՞ց էր, թե՞ ներսից, որովհետև Սերժ Սարգսյանը ինձ խոստովանել է, որ դա կազմակերպված էր, որ մի օր պիտի ասի, թե այդ ով էր կազմակերպել: Թող ասի, ես սպասում եմ այդ պատասխանին»**:

Մասնավորապես, Արամ Սարգսյանը վկայակոչված նյութում հրապարակային հայտարարել է, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը 1999թ. հոկտեմբերի 27-ի գործի վերաբերյալ արժեքավոր տեղեկությունների է տիրապետում և խոստացել է, որ դրանց մասին մի օր կասի Արամ Սարգսյանին:

1. http://www.1in.am/1834280.html

Վկայակոչված նյութը հիմք է տալիս պնդելու, որ Հոկտեմբերի 27-ի գործի բացահայտման բոլոր միջոցները և հնարավոր գործողություններ չեն կատարվել և անհրաժեշտություն կա ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին հարցաքննելու, ով կարող է արժեքավոր տեղեկություններ հայտնել Հոկտեմբերի 27-ի գործի կազմակերպիչների և այլ մանրամասների վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Ձեր լիազորությունները դիմում եմ Ձեզ պահանջով՝

1.իրավական գնահատական տալ հրապարակված նյութում առկա «Ես ուզեցել եմ հասկանալ՝ որտեղի՞ց էր Հոկտեմբերի 27-ի արյունը՝ դրսի՞ց էր, թե՞ ներսից, որովհետև Սերժ Սարգսյանը ինձ խոստովանել է, որ դա կազմակերպված էր, որ մի օր պիտի ասի, թե այդ ով էր կազմակերպել» տեղեկությանը:

2. Հարցաքննել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին վերը նշված նյութում հրապարակված տեղեկությունների վերաբերյալ:

3. Հարցաքննել «Հանրապետություն» կուսակցության առաջնորդ, Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Արամ Սարգսյանին նյութում հրապարակված տեղեկությունների շրջանակներում:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան